ՌԱՖԱՅԷԼ ՂԱՋԱՐԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

(Տապատուած- 17 Յուլիս,1991թ.)

Նախագահը յայտարարում է բանակցութիւնների ուղին: Համաձայն եմ: Բայց եթէ նա առաջարկում է 10 ամիս, խօսում է այդ ամսից, ապա ինչու՞ այդքան ուշացումով դարձաւ օրակարգի հարց, երբ արդէն 8 ամսից ի վեր դատարկւում է Արցախը: Երկրորդ՝ ես որոշ հակասութիւններ եմ տեսնում նաեւ նախագահի վարուելակերպի մէջ(...). Լ.Տ. Պետրոսեանը ինչու՞ հրաժարուեց Յունիսի 3ին Օզարյովայի այն բանակցութիւններից, որոնք նուիրուած են միութենական պայմանագրին, որովհետեւ հենց այնտեղ կարելի էր դնել այդ հարցերը: Այնտեղ պէտք է ասուէր թէ ի՞նչ երաշխիքներ կան, որ Ղարաբաղը, Արցախը փրկւում է: (...) Էկոլոգիական յաղթանակից հրաժարուեցին տնտեսական բարդութիւնների պատճառով: Արցախի հարցը տանուլ ենք տալիս, պէտք է դա խոստովանել: Մնաց անկախութիւնը: Եթէ դա էլ կորցնենք, նշանակում է մեր շարժման ծրագիրը լրացրել ենք, եւ այդ դէպքում, ես կարծում եմ, բարոյական կը լինի մըտածել հրաժարականի մասին: (...)Մենք, թւում է, որ այսօր ոչ թէ պէտք է քննարկենք այդ մեղմ նախագիծը, այլ պէտք է մտածենք հրատապ քայլերի մասին, թէ ինչպէս փրկենք մնացածը, ինչպէս կանգնեցնենք կորուստների պրոցեսը: Մենք կորցնում ենք օրեցօր: Եւ ոչ մի երաշխիք չունենք, որ այդ նախագիծը ընդունելով ծափահարութիւններով կը կասեցնենք այդ պրոցեսը: Ադրբեջանը, ինչպէս անցեալում, այնպէս էլ այսօր մեր առաջարկութիւններին չի արձագանքի, քանի որ նա խորհրդային բանակի օգնութեամբ հիմա ապրում է իր յաղթարշաւը, մինչեւ նրան չխանգարեն մեծ ուժեր, եթէ նրա համար աւելի վտանգաւոր չդառնայ այդ: Իսկ հիմա վտանգաւոր չէ: Հետեւաբար հիմա մեր հրատապ խնդիրն է, կասեցնել դա: Մենք պէտք է վարենք անկորուստ քաղաքականութիւն, բաւական է: Ես կարծում եմ, մենք վաղուց պէտք է հասկացած լինէինք, բայց գոնէ հիմա հասկանանք, թէ ինչ է ուզում մեզանից Մոսկուան, ինչու է նա մեզ ճնշում, (...) Մենք պարտաւոր ենք, ղեկավարութիւնը պարտաւոր է պահանջել, որ վարչապետը գնայ Մոսկուա իր յանձնախմբով եւ պահանջի պատասխան, թէ ինչ են ուզում մեզանից: Բացել ենք, մոռացել ենք ինչ բան է բոնազաւրը, մենք արդէն դադարել ենք հասկանալուց մի քանի Սումգայիթ կորցնելուց յետոյ: Գուցէ նրանց դուր չի գալիս, որ որոշել ենք հանրաքուէ անցկացնել: Գուցէ դրա համար են մեզ խեղդում: Կամ այն, որ չենք մտել միութենական պայմանագրի մէջ: Բայց այդ դէպքում բոլոր ղեկավարութիւնը պարզի եւ ասի ժողովրդի առջեւ. «ինչպէ՞ս էք կարծում. զոհե՞նք Արցախը, թէ՞ կասեցնենք այն զիջումներով»:

(...) Այստեղ (ԽՍՀՄ տնտեսական հակաճգնաժամային ծրագրում-խմբ.) ինձ անհանգստացնում է մի պարբերութիւն, որը ասում է, որ այսուհետեւ այն հանրապետութիւնները, որոնք չեն ստորագրում միութենական պայմանագիրը, մաքսային ինչ որ բաներ է մտցնում: Մեզ զրկում է այն յոյսից, որը մենք ունէինք անկախութիւն յայտարարելու գործընթացում, հիմնուելով հենց միութեան օրէնքների վրայ:

(...) Ոչ, երբ ստորագրուի այդ պայմանագիրը, դուք ընկնում էք ահաւոր վիճակի մէջ, եւ ես չեմ նախանձում ապագայ պրեզիդենտին, որովհետեւ նրան այլեւս ոչինչ չի մընայ, բան ստորագրել այդ միութենական պայմանագիրը, ուզենայ, թէ ոչ: Մենք պէտք է նախ եւ առաջ պահանջենք ղեկավարութիւնից բանակցել Մոսկուայի հետ արցախաբաժման պրոցեսը կասեցնելու: